Եղիշե Չարենց

Ես հավատում եմ հասկի շշուկին, խոսքին

Ես հավատում եմ հասկի շշուկին, խոսքին
Երբ հագել ես արևի թափանցիկ ոսկին:

Հեռաստանները հացի ոսկեգույն, ոսկեգույն:
Դու նայեցիր, ժպտացիր իմ գունատ հոգուն:

Աչքերիդ մեջ, հոգուս մեջ, քո՛ւյր իմ, կա՛ր, քո՛ւյր իմ, կար
Ոսկու շշուկ, ոսկու փայլ, ոսկու ճաճանչ ոսկեվառ:

Եվ հոսում էր ոսկեծուփ կապույտից դեպի վար՝
Արտերի գիրկը բերրի՝ մի հեշտություն հրավառ:

Ու ժպտում էր բռնկված ոսկին՝ անշեջ ու անփույթ՝
Կապույտ հոգուս, աչքերիդ, ու երկնքի՛ մեջ կապույտ:

Եվ հավատում էի ես հասկերի խոսքին,
Ու վառվում էր կապույտում արևի ոսկին...